«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 28.03.2017թ. թիվ 3 արձանագրությամբ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

RL 1-017 կանոնների 10-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով, ինչպես նաև 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում վերացնել ապահովագրական հատուցման մերժման վերաբերյալ իր որոշմամբ թույլ տրված խախտումը, մասնավորապես հիմք ընդունել ՀՀ ոստիկանության ՃՈ եզրակացությունը (Ելակետ 1, Ելակետ 2)՝ որպես ապահովագրական պատահարի առաջացման պատճառների առաջնային փորձագիտական եզրակացություն և դրա հիման վրա կայացնել ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում՝ հատուցելով տուժողին պատճառված վնասները: